

[illegible]

վերջ դեռևս սուլթանի ապստամբ հպատակի քաջագործութիւններն, որ համարձակ վում է իրացնել բարձր իշխանութիւն և Եգիպտոսի անուսով պատերազմ է յայտնում խեղդիլն և Անգլիային: Արարի-փաշայի շրջաբերականից յետոյ անկարելի է ընդունել որ և է բացատրութիւն կամ խորամանկութեան զոհ դառնալ: Բ. Գուռը պէտք է ուղղակի պատասխանէ՝ համաձայն է թէ ոչ ճշնել այն ապստամբութիւնը, որին առաջնորդում է Արարի-փաշա:

Եթէ Բ. Գուռը զրախան պատասխան կը տայ, ուրեմն նա անպաղպղ պէտք է զբաւեցնուի իր զօրքերով, իսկ եթէ նա ուշացրեց այդ գործը, պէտք է ոչնչացնել նրա համաձայնութիւնը Եւրոպայի հաւատարմատար լինելու մասին:

Այսուհետեւ մի օր անգամ անկարելի է սպասել: Անգլիայի առանձին գործողութիւնները համար Եգիպտոսի մէջ Արարի-փաշա այնպիսի առիթ ստեղծեց, որի հիմնաւոր լինելը կը խոստովանեն բոլոր պետութիւնները: Ճշմարիտ է անգլիական կառավարութիւնը ստորագրել է, «անշահախնդրութեան պրոտոկոլ», բայց տալով իր ստորագրութիւնը, նա ի բաց է առել մի քանի հանգամանքներ: Իրաւաբանական տեսակէտից որքան էլ ապօրինի լինի Արարի-փաշայի կողմից Անգլիային պատերազմ յայտնելը, այնու ամենայնիւ դա մի փաստ է, որ անհրաժեշտ է դարձնում պատերազմական գործողութիւնների սկսելը այն զօրքերի դէմ, որոնք հնազանդութիւն են շրջաբերականի հեղինակին: Արաբի գի Անգլիայի

միջամտութիւնը առանձնական չը լինի, պէտք է նրան օգնէ մի այլ պետութիւն: Այդպիսով այդ երկու պետութիւնները կը կատարեն Եւրոպայի հաւատարմատարի գերք:

Պէտք է կարծել, որ անցքերը հէնց այդպիսի ընթացք էլ կը ստանան և որ Անգլիայի հետ Եւրոպայի միւս հաւատարմատարը Ֆրանսիան կը լինի, որ արդէն բաւական ընդարձակ պատրաստութիւններ է տեսել եգիպտական արշաւանքի համար: Փարիզից ստացված մի քանի տեղեկութիւններէ երեւում է, որ Ֆրանսիական կառավարութիւնը փորձում է խտրաբանել միւս նախկին անկմիջամտութիւնը: Այդ գործի դէմ անկասկած ոչ որ չի բողոքել, եթէ խտրական կը կարողանայ անյապաղ զօրքեր ուղարկել Եգիպտոս: Որքան էլ շատ լինեն միջամտող պետութիւնները, այնքան լաւ է, որովհետեւ այն ժամանակ նրանցից մէկը անկարող կը լինի գերակշռող դերը խնդրելու մէջ: Բայց եթէ խտրական մասնակցութիւնը կուշացնէ գործը, երեւ պետութիւնները առանց նրա մասնակցութեան էլ կը բաւականանան:

Եգիպտական գործերը ամենամոռոտական ժամանակը արդէն հասել է և կարելի է համարձակ տեսլ, որ այսուհետեւ Թիւրքիայի դրութիւնը Եւրոպայի մէջ աւելի էլ կը վատանայ, քան թէ առաջ: Երբ Արարի-փաշայի ծագեցրած ապստամբութեան տպաւորութիւնը կանցնի, ակներեւ է, որ կը բարձրանայ հետեւեալ հարցը. արդեօք կարելի է Եւրոպական պետութիւնների ընտա-

նիքի մէջ համբերել այնպիսի մի պետութիւն, ինչպէս Թիւրքիան է, որ Եւրոպայի հանգստութեան խանգարման անսպառնելի մի աղբիւր է կազմում: Թիւրքաց կառավարութիւնը անկասկած կը պատժվի իր բուն աւախական քաղաքականութեան համար եգիպտական հարցի վերաբերութեամբ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— «Բէյութի ընկերութիւնը» Ալեքսանդրիայից հեռագրում են: Խեղդիլը Արարի-փաշային ապստամբ է հրատարակում և արգելում է զօրքին հնազանդել Արարիի հրամաններին: Մի այլ շքեղ քաղաքական խառնակում հարկերը չը վճարել: Կարելի է հանգստութիւն է տրուում. պօլիցիան իր բոլոր ուժերը գործ է դնում կարգը պահպանելու համար: Կապույտներից ստացած մամուլաւոր տեղեկութիւնները հիման վրա, Արարի-փաշայի զօրքերը 12,000 մարդուց են բաղկացած:

— Լրագիրներին Փարիզից հեռագրում են յուլիսի 11-ին: Այսօր «Մարտիէլեզի» հեղինակի արձանը օրհնելու ժամանակ, Ֆրէյսինէ ճառ խօսեց, որի մէջ գտնւում էր հայերենակցների դիւտիւնը Բուսէ-Ալիլի մասին և ասեց, որ Ֆրանսիացիք արտասահմանում էլ գիտեն, որ ժամանակակից Ֆրանսիան բարձր է բռնում ոչ թէ անբան զրօշակ, այլ առաջադիմութեան, քաղաքակրթութեան և ազատութեան դրօշակը:

— Ալեքսանդրիայից, յուլիսի 10-ին հեռագրում են լրագիրներին, որ Արարի-փաշան կալիքում նոր միւստորութիւն կազմեց Մահմուդ-փաշայի հետ:

— Բրիտանական համայնքների խորհուրդը մոտեց խնդրել արտագամաւորների ժողովից կանոնադրել օրինական կերպով մարմիններ այրելը:

— Հալապի ընկերութիւնը՝ հարցրում է, որ

Ֆրանսիան Սուէզի ջրանցքը պաշտպանելու համար այժմ միայն 5 կամ 6,000 հոգուց բաղկացած հետակ զօրք կուղարկի Եգիպտոս:

— «Times» լրագիրը տպեց Գլաշտոնի ուղարկած Արարի-փաշայի նամակը, յուլիսի 2-ից: Գլաշտոն այդ նամակը արդէն պաշարումից յետոյ ստացաւ: Արարիին ստում է. Անգլիան կարող է հաւատարմած լինել, որ անգլիացիների առաջին հրապանակութիւնը կազմուէ Եգիպտոսը բոլոր զաչնազիրներից: Պարտքի վրա եղած կոտորուղի կը դնւանայ: Եւրոպացիների կայքը յարբուխ կը դրաւի: Ջրանցքները կը քանդվեն: Հաղորդակցութիւնները կը կտրվեն: Մահմուդականների ֆանատիկութիւնը կը զրգովի սրբազան պատերազմը հրատարակելու համար Արիպաշում, Արարիպաշում և Հնդկաստանում:

— Յունիս ամսվայ ընթացքում իրանդիպում 283 հոգային յանցանքներ են կատարված: որոնց թւում է 4 մարդապանութիւն:

— Ֆրանսիայի հռչակաւոր դիւանական Բենանի նոր գիւղը «Էլէլիպատ»-ի վերնաբերով հռոմէական կղերի արդիւնքը դրերից ցուցակում է:

— «Բէյութի ընկերութիւնը» Կէօնից հարուրում են յուլիսի 19-ից, որ թէյնեան հոգեւոր իշխանութիւնները մէկ խնդրակի ներկայացրին պրոտական կառավարութեանը, որի մէջ միջնորդում են աքսորված արքեպիսկոպոս Մելիթիոսի նախկին թեմը վերականգնելու համար: Գաւառի իր կողմից չէ կարող միջնորդել կայսրի մօտ նրանց խնդիրը ընդունել տալու համար:

— «Բէյութի ընկերութիւնը» Սօֆիայից հեռագրում են յուլիսի 18-ից իշխան Ալեքսանդրի վարնա դնալու մասին: Նորին բարձրութիւնը Յանիօլին բանտից ազատելու պատրաստակա նուիրել յայտնեց, միայն այն պայմանով, որ Յանիօլի Ռուսաստան տեղափոխվի: Յանիօլի բաւականները այդ պայմանը աքսորի դատաւարութեան հաւատար են համարում: Բուսուլի

նակարկուր տնտեսական պարագմունքները գիւղացուց մեծամասնութեան համար կարող են վերջացած համարվել: Աւելի օգտակալ կը լինել, եթէ հողաբարձուք յայտարարելին գիւղական ժողովներում և որպէս իրենցից զարդ մտնելու ժամանակամիջոցը: Իսկ եթէ այդ էլ չափողվեցաւ, որ շատ հաւանական է (որովհետեւ գիւղացիք ամենքն էլ ժողովներում չեն գտնվում և չուտով էլ մօտանում են լսածը), մնում է միայն բարձել ուսուցչի վրա մի ծանր աշխատանք, այն է, որ նա նախապէս պտուէ բոլոր գիւղացուց տները և համոզել իւրաքանչիւր ծնողի իւր առանձին-առանձին: Յուսով ենք, որ գործին առաջնորդողների միջամտութիւնը կարող է այդ դէպքում մեծ օգտութիւն ցոյց տալ: Ամենից յարմար է նորեկ (թէ դրապետ և թէ անդրադատ) աշակերտաց ընդունելութեան համար նշանակել միջին թւով երկու ամիս, այսինքն մինչև նոյեմբերի 1-ը. նոյեմբերի 1-ից յետոյ ոչ մի դէպքում դպրոցը չը պիտի ընդունի իր մէջ ուշ մտնող աշակերտներ, այսպէս նա իր աշակերտաց յառաջադիմութեամբ չէ կարող գիւղացուց հաւատարմութիւնը դրանք դէպի ինքը. գործի յառաջադիմութեան համար պիտի համոզվել, որ ուսուցիչը յետ ուղարկելով դպրոցից ուսացող աշակերտին, անշուշտ պիտի թշնամանայ նրա հօր հետ, այն ինչ ծնողների մեծ մասն ու թէ իւր, որոնց որովքը սովորում են դպրոցում, ուսուցչին կը յայտնեն իրանց հարձակաւորութիւնը: Այդ կողմից ուսուցիչը պիտի շատ զգուշ լինի և առելի հեռաւորութիւն արած կը լինի, եթէ ուշ եկող ծնողաց յետ կուղարկել հողաբարձուց մօտ, կարճ բացատրելով նրանց թէ՛ նա հողաբարձութեան հրամանով երեխայից զարդ ընդունելու իրաւունք չունի, հողաբարձուք էլ, ի հարկէ, գործերի դրութիւնը լաւ բացատրելուց յետոյ, այնուհետեւ կաշխատան միւս տարի էլ պղպշտ չուշանալ: Միմիայն դպրոցի հողաբարձուցը հաստատակամութիւնից կարելի է սպասել, որ երեխայը դպրոց միաժամանակ մտնեն, որ կարելի լինի կարգի դաստան մէջ մի յայտնի թիւ բաժիններ, որոնք մի և նոյն ժամանակ ունենային հաւատարալակի դարգացում ու դիտութեանց պաշար, և որ դպրոցը չունենար իր մէջ այն բարեկօնեան խառնակութիւնը, որ այժմ է տիրապետում մեր մէջ, որ վարժարանը չունենայ իր մէջ այն անթիւ բաժինները կամ դաստանները, որոնց արդիւնաւոր կերպով չէ կարող կառավարել մի անգործ և անպատրաստ ուսուցիչ, նա

մանաւանդ, եթէ մենք աչքի առաջ առնենք մեր վարժարանի ուսումնական շրջանի կարծութիւնը գիւղական երեխայի կեանքի շրջանում: Եթէ օրինակի համար 10 անդրադալու աշակերտ մտնում է վարժարան սեպտեմբերի 5-ին, 7-ը հոկտ. 5—10-ին, 3-ը յունվարին կամ փետրվարին, այն ժամանակ մի դաստան մէջ անդրադալու աշակերտները կը կազմեն երեք բաժանում. այդ երեք բաժինը մենք կուրենանք ոչ միայն մի առարկայից, այլ և այն առարկաներից, որոնք աւանդում են գիւղական—ծխական դպրոցներում. ուրեմն, եթէ մենք ամեն տարի այդ կարողով աշակերտներ ընդունելու լինենք, այն ժամանակ երեք տարուայ ընթացքում մենք կուրենանք ինն բաժանում մի ուսուցչի խնամատարութեան ու պատասխանատուութեան տակ: Գծուար չէ երեխայից այն ժամանակ այդ տեսակի դպրոցի յառաջադիմութիւնը—աշակերտները կը վարժվեն միայն այն առարկաների մէջ, որոնք ուսուցչից քիչ թէ շատ օգնութիւն են պահանջում, այսինքն նրանք կարող են մարզուր դրել և շատ քիչ (գրեթէ ամենին) դարգանալ միւս դարգացուցիչ առարկաների—կը, բօնի, մայրենի լեզուի և թուրքականութեան մէջ, որոնց համար պահանջում են ուսուցչի կողմից բացատրութիւններ ու մեկնութիւններ կամ աւելի մեծ աշխատանք, որ կարողանայ դաստիարակել երեխային ինքնագործունէութեան մէջ: Ահաւասիկ ինչով է բացառվում այն, որ ամենավատթար և ամենամանկանտ դպրոցներից, ուր իւրաքանչիւր աշակերտ սովորել է ինքն իրան, գուրս են եկել լաւ ձեռագրով (պօչէրով) աշակերտներ, բայց մի և նոյն ժամանակ մտաւոր ընդունակութիւններից զուրկ ըլժամիտ մարդիկ: Որպէս զի դրաւրցը իր մէջ ունենայ մի քանի դաստաններ, օրինակ բաժանում, այսինքն չորս դաստան, իւրաքանչիւր դաստան երկու—երկու բաժնով, ինչպէս են դպրոցները Գերմանիայում, Զուլիցերլանդում և առ հասարակ այն երկրներում, ուր պարտադր ուսումը ստիպում է աշակերտին մնալ դպրոցում ու թիւ տարի, ընդունելով մի և նոյն ժամանակ նորիկ աշակերտներ իւրաքանչիւր տարի—անշուշտ հարկաւոր է երկու պայման,—1) ուսուցչական պաշտօնի համար լաւ պատրաստված լով իր ընտանիքի ծոցում (կարգաւորվող լրագիրներ) մտնելով դպրոց 6 տարեկան հասակում և մնալով այնտեղ մինչև 14-ը տարի, իւրաքանչիւր տա-

րի յաճախում է դպրոց ամբողջ 10 ամիս, այսինքն ուսանում 80 ամիս իր ամբողջ դպրոցական կեանքում: Մեր գիւղացին առհասարակ այնքան աղքատ է, որ չէ կարող իր որդուն պահել դպրոցում և երեք տարուայ աւելի, աշակերտը դաստիարակվելով ու հասնել առնելով անկիրթ և անդարգացած ընտանիքի մէջ, ուսանում է 6—7 ամիս անկանտ, իսկ ամբողջ իր կեանքում—80 ամիսայ փոխարէն, միայն 18—21 ամիս: Եթէ Զուլիցերլայի ու Գերմանիայի ժողովրդական ուսուցիչը դպրոցի ու թիւ բաժիններում կամ ու թիւ դաստանց մէջ 80 ամիս ցոյց է տալիս մեծ յառաջադիմութիւններ, այդ շատ էլ մեղ չը պիտի դարձան, որովհետեւ ուսուցիչը թէ տեսականապէս և թէ գործնականապէս պատրաստված է իր պաշտօնի համար, որովհետեւ եթէ զուլիցերլանդի ու թիւ դաստանից բաղկացած դպրոցի ուսուցիչը աւանդել իւրաքանչիւր դաստան չարափական 4 դաս միայն, այն ժամանակ նա իւրաքանչիւր դաստան, ու թիւ ուսումնական տարում, այսինքն 320 ուսումնական շաբթուր միջին թիւով կուրենար 1280 դաս, ի բաց առնելով դեռ այն բոլոր ինքնուրոյն, բանաւոր ու գրաւոր պարագմունքները ու վարժութիւնները, որոնցով ուսուցիչը կարողանում է իր ինքնուրոյն աշակերտին արդիւնաւոր կերպով: Եթէ մենք ի նկատի առնենք այն, թէ ինչքան վատ է ուսուցիչը և ինչքան վատ են դաստիարակված աշակերտները ընտանեկան կրթութեամբ, այնքան աւելի է ժամանակ կորչում յայտնի նրա պատակներին հասնելու համար—չէ կարելի այն ժամանակ չը համաձայնվել այն կարծիքի հետ, թէ մեր գիւղական—ժողովրդական դպրոցը աւելի շատ ուսումնական տարիներ է պահանջում, քան զուլիցերլանդի, կամ գերմանական: Բայց իսկ և իսկ մենք ինչ ենք նկատում:

Ենթադրելով մեր գիւղական դպրոցում երեք բաժանում և իւրաքանչիւրում չարափական maximum 12 դաս, կը տեսնենք որ երեք ուսումնական տարում, այն է 18 (6×3) կամ 21 (7×3) ամիսում, այսինքն 72 կամ 84 ուսումնական շաբթուր իւրաքանչիւր դաստան ընկնում է միայն 864 կամ 1008 դաս. բայց եթէ մենք այս տեսակի դպրոց բաժանելու լինենք ոչ թէ 8 բաժիններով վրա, այլ միայն 6, այն ժամանակ իւրաքանչիւր դաստան կընկնէ միայն 432 կամ 504 ժամ պարագմունք, այսինքն 1/3 կամ մօտաւորապէս 2/5 մասը այն բոլոր ժամանակի, որ ունի իր իւրաքանչիւր յաշի զուլիցերլանդական մանկավարժը: Այդ

տեսակ պայմաններ աչքի առաջ առնելով, ինչ արդիւնք կարող է ցոյց տալ մեր անպատրաստ ուսուցիչը գիւղական դպրոցում: Այդ տեսակ ուսման հետեանց կարող է լինել այնքան աննշան, որ գիւղացիք կարող են դպրոցի վրա կասկածանքով նայել: Ճշմարիտ է, որ ուսուցիչը՝ ունենալով իր ձեռի տակ երկու օրականներ աւագ աշակերտներից, կարող է կառավարել և 6 դաստան, բայց քրտեղից գտնենք մենք մի այնպիսի շինութիւն, որ դպրոցի երեք բաժանմանը առաջարկելին ինքնուրոյն աշխատանք, իսկ մնացեալ երեք դաստանը յանձնել մի ուսուցչի և երկու էլ բարձր դաստան աւագ աշակերտների: Ուրեմն աչքի առաջ առնելով մեր ուսուցչաց մեծամասնութեան անփութութիւնը, ուսումնական տարիների փոքրութիւնը ու կարծութիւնը, դպրոցը կարող է օգուտ քաղել դէժ միայն մի բանով, այն է, որ նա իր մէջ ունենայ որքան կարելի է շատ քիչ բաժիններ:

Ամենից յարգվում և ամենին յայտնի ուսուցիչի ստիպալ—մանկավարժ Ուլիսիկին ստում է թէ՛ «մի դաստան մէջ մի քանի թիւեր կամ բաժիններ ունենալը, մէկ մէկուց տարբեր ոյժերով, ոչ միայն մեծակար չէ, այլ մինչև անգամ օգտակալ է, եթէ դաստիարակը, պարագմունք մէկ իւրում ինքն ինքը, կարողանայ տալ միւս երկու բաժանմանց օգտակալ ինքնուրոյն դրաւոր կրթութիւն»։ Նա շարունակում է—«այն դաստանը, որ բաղկացած է մի քանի բաժիններից, որոնք թէ՛ դարգացման և թէ՛ դիտութեամբ տարբեր են միմեանցից քիչ թէ շատ ատրիմանով, մինչև անգամ աւելի շատ պայմաններ ունի կանոնաւոր ուսման համար, քան թէ այն դաստանը, ուր ուսանում են մի հասակի, մի դարգացման և մի դիտութեան տեղ երեխայը: Առաջինի հետ չէ կարելի չը համաձայնվել, ոչ թէ գործնական այլ և տեսական կէտից նայելով.—երեխայից դարգացումն կանոնաւոր կերպով կընթանայ, եթէ դաստան մէջ լինելն մի քանի բաժիններ, դաստաններ. բայց աւելի կանոնաւոր կը լինել գործը ամեն տեղ և ամեն ժամանակ, եթէ ուսուցիչը հասկանար, որ երեխայից դարգացումն ձեռք է բերվում ոչ միայն ուսուցչի դրոցատրութիւններով ու դաստիարակութիւններով, այլ և աշակերտաց ինքնուրոյն աշխատութիւններով (շարադրութիւններ, խնդիրներ, զմարտութիւն, նկարչութիւն, վարչապարտիւն և այլն):

(Կը շարունակվի)

բնակիչները խնդրեցին զինվորներին չմտնել Զան-
կովին արձակելու համար: Նոյնաման խնդրե-
ցին Սոֆիայի բնակիչները ներկայացրին միմյան-
րի խորհրդի նախագահ գեներալ Սոբոլևիչին: Ինքն
Ցանկով նոյնպես խնդրում է, որ իրան բանտից
ազատեն:

ԽԱՌՆ ԼՈՒՐՆԵՐ

Փարիզի «Temps» լրագրերը յուլիսի 19-ից հաղոր-
դում է: Պատգամաւորները ժողովը գալուց յետոյ,
Գամբետտայի հեռագրաւոր ստացաւ իր մօր մահ-
վան մասին: Նա այն յոյսով փարիզ եկաւ, որ կա-
րողանայ այսօր կենդանի գտնել իր մօրը: Շատե-
րը նրա ընկերներին, որոնք զանազան կուսակցու-
թիւններին են պատկանում պատգամաւորների
ժողովում, չըջապատեցին նրան և յայտնեցին նը-
րան իրանց ցաւակցութիւնը: Նրանց թուում էր
և պ. Կլեմանսօ, որը պատրաստուիւ էր ամբիօնի
վրա բարձրանալ և խօսել այն ջաղաքականու-
թեան դէմ, որ Գամբետտա երէկ մեծ ճարտարու-
թեամբ բացատրեց: Իսկոյն զրանից յետոյ, Գամ-
բետտա Սէն-Մանդէ ուղևորվեցաւ, ուր նրա մայ-
րը վախճանվեցաւ այսօր, տասներկու երրորդ ժա-
մին իր աղջկայ, տիկին Լէրիսի մօտ:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՅՈՒՆ

ՓԱՐԻԶ, 19 յուլիսի: Ֆրանսիան դադա-
րեցրեց բոլոր զինուորութիւնները: Ծովա-
պետ Կոնրադին հրաման է ուղարկված
խիստ չէզոքութիւն պահպանել:

ՀՌՈՄ, 19 յուլիսի: Իտալիան մերժեց
Անգլիային օգնել Եգիպտոսի մէջ:

ԿԱՅԻՐԵ, 19 յուլիսի: Հոգեւորականների և
աշխարհական անուանների ժողովը Արա-
բի-փաշային հայցերն զրկելու պաշտպան յայտ-
նեց, իսկ խեղդիվն մահմետական օրէնքնե-
րից դուրս:

ԱԳԱՆԱ, 19 յուլիսի: «Մօսկվա» շոգեհաւը
կործանվեցաւ Բախտիֆուրի մօտ: Նաւի վրա
ճառաւորները և ճանապարհորդները ազատ-
ված են: Հաղորդում են, որ նրանք կեն-
դանի և առողջ են:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 յուլիսի: Կրեստովսկի
կղզու վրա, Ս. Պետերբուրգի շրջականե-
րում այրվեցաւ մի շարք ամառանոցների,
նոյնպէս և Կրեստովսկուց Նյազին կղզին տա-
նող կախուրջը: «Голосъ» լրագիրը հաղոր-
դում է, որ Կուկուլեվի աղետի համար
պատասխանատուութեան են ենթարկված
բաժնի գլխաւորը, 296-դ վերստի պահա-
պանը և ճանապարհի վարպետը: Կա-
ռուցանվող պոյտ անող ճանապարհի վրա
գնում են հին խողովակը, որ հանվեցաւ
փչացած հողակոյտի տակից:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 յուլիսի: Պետական
բանկի 5% տոմսակը առաջին շրջանի ար-
ժէ 94 ռ. 50 կ., երկրորդ 90 ռ. 37 կ.,
երրորդ 90 ռ. 50 1/2 կ., չորրորդ 90 ռ. 12 1/2
կ., հինգերորդ 90 ռ. 5 կ., յեղբուն 5% առա-
ջին փոխառութեան տոմսակը արժէ 212 ռ.,
երկրորդ 210 ռ. 75 կ., արևելեան առաջին
փոխառութեան տոմսակը արժէ 89 ռ. 75
կ., երկրորդ 89 ռ. 25 կ., երրորդ 89 ռ. 50
կ., ոսկի 8 ռ. 23 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լօն-
դօնի վրա արժէ 24,03 պէնս, ռուսաց 100
ր. Համբուրգի վրա արժէ 205 մարկ 25 պֆ.,
Փարիզի վրա արժէ 252 ֆրանկ 25 սան-
տիմ: Բօրսայի արամաղրութիւնը հանդարտ
է:

Իմբադիր—հրատարակող ԳԻՐԻՆՈՒ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Պատիւ ունիմ յայտնել պատվելի հասա-
րակութեանը որ Սօլուալից տեղափոխվել
եմ Գոլովինսկի պրօսպեկտի վրա Տրիգուլ-
վի տունը և ամսին 4-ից բացել եմ իմ կօն-

դիտերի և հացեղների մագազինս «Вар-
шавская пекарня» անունով, որտեղ
ծախում եմ կօնֆետներ, պիրօֆնի, պեչե-
նի, մուրաբա, սուսարի, կուլիչ, տօրա,
բուլկի, զանազան տեսակ հացեղներ, և
տաք պիրօֆնէք, շատ ձեռնտու գներով, իսկ
գաւառացի վաճառականներին մեծ զեջու-
մով: Նմանապէս ընդունում եմ ամենայն
տեսակ կօնֆետեղների և հացեղների պատ-
ւէջներ աւելի արժան քան ուրիշները, այն-
տեղ ևս կարող են գիմել սօլիտերով հի-
ւանդներ գեղ ընդունելու համար թէ ան-
ձամբ և թէ գրաւոր:

ՄԱՐՏԻՐՈՍ ՀԱՅՆԱԶԱՐԵԱՆՑ
9—10

Ներսիսեան դպրոցի ուսուցիչ՝ ԳԻՐԻ-
ՆՈՒ ՇԱՀԲԱԳԻԱՆՆԵՐ ՀԱՓԱՐՈՎ ԺՃԱՐՈՎ
ընդունում է 4 գաւառացի ԳԻՆԵՐՈՒԿ
աշակերտներ, յանձն առնելով նոյնպէս
նոյա ԳԱՍԵՐԻ ԿՐԿՆՈՒԹԻՒՆԸ: Ցանկա-
ցողները թող բարեհաճեն մինչև
առաջիկայ ՕԳՈՍՏՈՍԻ 10-ը յայտնել
իրանց ցանկութիւնը հետեւեալ հա-
ցելով: ВЪ г. Тифлисъ, Григорию
Шахбугаганцу. Учителю Армян-
ской Семинаріи Персесянъ.
1—3 (2)

ՄՈՇԱԿՆԵՐ ԿՈՏՈՐԵԼՈՒ
Դ Ե Ղ Ը
24 հաւոր արժէ 90 կօպ.
Ե Փ. ԾԱՏՈՒՐԵԱՆՑԻ
Դ Ե Պ Օ Յ Ո Ւ Մ:
7—10 (2. Է)

ԹԵՑ առաջին հունձի այս տարի չա-
փազանց գոյնաւոր և հոտաւէտ: Այդ թէյից
ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ
ստացված է 50,000 ֆունտ և ծախվում է
25% էժան և աւելի լաւ քան թէ ուրիշ
տեղ: Օրինակ. Լաւ ԿՈՆԳՈ թէյ 1 ռ.—1 ռ.
20 կօպ., պատուական ՍԱՆՖԱ թէյ 1 ռ.
40 կ., հիանալի ՄՈՆԻԿ թէյ 1 ռ. 60 կ.
այս թէյ ամեն տեղ ծախվում է 2 ռ.—2 ռ.
50 կ., զեղեցիկ ԿԱՅՍԱՆԻ թէյ 1 ռ. 80 կ.
և ամենալաւ ֆուշու-ֆու թէյ 2 ռ. մա-
րուր թէյ առանց թղթի: Նոյն տեղը սով-
որաբար լինում են 500 երկաթէ ՄԱՀԱԿԱՆ-
ՆԵՐ 6 ռ.—60 ռ., երկաթէ ԳՐԻՉՆԵՐ աւ-
բողջ Անգլիոյկապի համար, շօկուրդ ֆրայ,
Շելլիլիլի ԳԱՆԱԿՆԵՐ, վերականգնող ՄԱԿ-
ՄԱՍՏԵՐ մաղերի համար, հրացաններ ԳԱՈՒ,
ԲԵՂՎԵՐՆԵՐ ՎԵՐԻՆ, ԹԱՄԲԵՐ Բարնեբի,
Կօլմանի նըշըտայ, ԱԼԲՈՄԵՐ Շփարցի կէս
գնով: **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ,**
ԹԻՖԼԻՍԻ ՄԵՋ ԱՐԾՐՈՒՆՈՒ
ԳԱԼԼԵՐԵՑՈՒՄ № 156, 157, 158,
159 և 100:

5—100

ԻՐԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵ-
ՆԵԱԿ, Գօլովինսկի պրօսպեկտի վրա,
տուն ճարտարապետ Բէլօի: Գրասենակը
բաց է առաւօտեան 9 ժամից մինչև 3
ժամը կէս օրից յետոյ և երեկոյեան 7—
10 ժամը ամենայն օր, բացի կիրակի օրե-
րից և մեծ տօներէից:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՍՈՒՑՁԱ-
ԿԱՆ ԺՈՂՈՎԻ նախապատրաստու-
թիւնները հոգացող Կարգադրիչ Ցանձա-
ժողովը խնդրում է այն պարսններին, որոնք
որ և է **ՏՆՂԵԿՈՒԹԻՒՆ** ցանկա-
նում են ստանալ **ՑԱՆՁՆԱԺՈՂՈ-**
ՎԻՑ կամ հաղորդել նորան, որ բարեհա-
ձեն **ՇՆՈՐՀ ԲԵՐԵԼ** նրա **ԳՐԱ-**
ՍԵՆԵԱԿԸ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱ-
ԼԵՐԵԻ ՄԵՋ № 170: Գրասենակը
բաց է **ԱՄԵՆ ՕՐ** առաւօտեան 9 ժա-
մից մինչև 11 ժամը:

ՋԱՔ. ԳԻՐԻՆԵԱՆՑԻ «Կովկասեան գրափաճառանոցում» ստացվեցան հետեւեալ նար
հրատարակութիւնները:
1) Խ ա տ ի ս ե ա ն ի—Մանկավարժական Խորհրդածութիւններ—Հայոց ծխական ու-
սումնարաններ և ազգային լուսաւորութեան բարեկամներուն նուիրում է Գաբր. Խա-
տիսեան ա. մասն, թիֆլ. 1882 թ., գինն է..... 60 կ.
2) Բ ա հ ա թ ի ե ա ն յ ի—Ուղեցոյց Հայ Ուսուցչի—ընդհանուր մեթոդիկա և առա-
ջին տարուայ նիւթի մշակութիւնը—աշխատասիրեց Ա. Բահաթրեանց, թիֆ. 82 թ. . . 1 ռ.
3) Բ ա հ ա թ ի ե ա ն յ ի—Այբեկարան—առաջին տարուայ կարգաւ և գրել ուսու-
ցանելու նիւթը. Ա. Բահաթրեանց, թիֆ. 82 թ. 4 կ.
4) Բ ա հ ա թ ի ե ա ն յ ի—Օրինակելի բառերի ցուցակները՝ 2 թերթ, թիֆ. 82 թ. 40 կ.
5) — — — — — Առաջին տարի ընթերցարան. 20 կ.
6) Ս ի մ յ օ ն ե ա ն յ ի—Ժողովածու թուարանական խնդիրների, Հայ ուսումնարան-
ների համար. I մասն—ամբողջ թուր. 4-րդ տպագրութիւն. փոխադրութիւն Մարտի-
րոսի Սիմօնեանց. վաղարշապատ, 82 թ. 50 կ.
3—3

JOURNAL D'ORIENT
HEBDOMADAIRE

Paraissant a VIENNE (Autriche)
ABONNEMENTS: 1 an. . . . 8 roubles
6 mois. . . . 4 —
S'adresser à F. Salles, avocat
1. Neuermarkt 9. (Vienne)
Sans ajouter le titre du journal.

Մ Ի Ջ Ի փ ո ղ ո յ, Կ ա թ յ լ ի չ ե ս կ ա յ ա փ ո ղ ո յ ի ա ն կ ի լ ը Ն 13.

Աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻՆՆԱՅԻ ՄԵՐԵԼ ամե-
նայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթէ ԿՐԱՎԱՅՆԵՐ 8—30 ռ., չա-
մազաններ 250—25 ռ., սակիցաժներ 1. 30—12 ռ., ս ու լ ը ղ ու լ ը ն ե ռ ձա-
նապարհի 6—35 ռ., մարաններ (поребцы) 6—25 ռ., ս ա մ օ վ ա ը ը ն ե ռ
60 կ.—1.25 ֆունտը, կուկանի պղնձէ ամաններ, Գերմանիայի երկաթէ էմալով
ամաններ. ու մ ի վ ա լ ը ի կ ն ե ռ մ ր ա մ օ ը ը ի 38 ռ.—75 ռ., հրացաններ
երկու լույսին 6—32 ռ., ու ղ ղ ո ղ ը ը ը ն ե ռ ա մ ը ն ա յ ի տ ե ս ա կ 3. 50—30
ր., պատրաններ. (գուլաններ) ընթերցելի, սիգար Ռէնգարդի ֆարիկից. պապի-
րոս և թամբաքու Կուշնարովի գիլիլի պապիրօզի. 5,000 ֆՈՒՆՏ ԹԵՑ (չոյ) ԵՂ.
ՊԱՊՈՎՆԵՐԻ, բիսկիտ. (սուխար չոյու և կաֆէի) Լինէմի. կօֆէ Լինէմի
Միխէլսօնի. Պետերբուրգու 40—1 ռ. 25 կ. հայելիներ ամենայն տեսակ
28 կ.—240 ռ., պրօր կ ա յ զ ի ն ժ ա ճ ա ը ն ե ռ ի, հանքային և զարեջրի (ДЛЯ
зельтерскихъ водъ и пива) դոյթուկ (пучкъ), պադոսներ սամոկարի և
չոյու, զանակ չանգալ զանազան ֆարիկաների 1 ռ. 20 կ.—25 ռ. դուժիւր.
գրչակութիւն 1 ռ. 80 կ.—5—60 կ. դանակ ջրի 1—60 կ.—12 ռ., դա-
նակ հացի 20 կ.—1 ռ., հատը, կուկանի 1—40 մինչև 3—20 կ. պրիբօր.
միս կարելու մաշինայ. Անգլիական ուժաներ, Գերմանիայի չոյիկներ, կաֆէի-
նիկներ ամենայն տեսակ, ջաղաքներ կաֆէի համար, ֆրիտեր—Չուր մաքրու-
կրանով կարօբկէն 18 կ., վաքս ֆրանսիայի ժակց, Թուղթ փոշուր, կանկերու-
ներ, սուրգուչ, մառիա, գրիչ երկաթէ, գրչակութ, քարտասխտակ, թանաք,
թանաքամաններ, պրեսպապիկներ, գլաներ սեղանի և չոյու ֆրամէ, վարչակի
և բրիտանակի դուժիւր 1—50 կ. մինչև 12 ռ., և չոյու 45 կ.—5 ռ., չու-
միչէք 45 կ.—5 ռ., շամաղաններ ամեն տեսակ 25 կ.—12 ռ. Չուխտ, պոյ-
սապոշկաններ վարչակու, Ռեզիւնի ԿԱԼՕՇՆԵՐ, ամեն տեսակ, գուլաններ կա-
նանց և մարդկերանց 15 կ.—50 կ. Չուխտ, շապիկներ, մարդկերանց գալուս-
տիկներ, գնախիկներ 35 կ.—4—50 կ., հատ, անձրեկ և շոքի. սանդղեր շի-
մայու ոսկորէ, գուտապերչովի և փայտէ, շոտկաններ գլխի, շորի, սապիկի, պոլի
և կարտի համար, չուլքի թէլ (бумага) մատիկի կօճի և շալէ (парусъ) ֆէլ-
չատկէք մարդկերանց և կանանց, պորտմաններ, քիսաներ, պապիրոսի ամաններ
և մանր գոլանտերիցնի ապրանքներ, սապոն ամեն տեսակ 3 կ.—30 կ.,
կտոր, հոտաւէտ ջրեր, պուգրա, Գլիցերին ջրի քացախ, հոտաւէտ պարաշոններ
ԿԻԼԵՐԻ ԼԱՐՈՐԱՏՈՐԻՑ. և այլն և այլն և այլն:

վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերցիլեալ ապ-
րանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գտնվում են ՄԻՔԱՅԵԼ ՏԵՐ ՆԻԿՈԳՈՒ-
ՍԵԱՆՑԻ պահեստում. (ВЪ Складѣ) միջի փողոցում կաթոլիկաց փողոցի ան-
կիւնում № 13.

Օտարաբաղաբաշխը կարող են գիմել հետեւեալ հասցեով. Тифлисъ Ми-
хаилу Н. Теръ-Никогосову.
96—180

Մ Ի Ջ Ի փ ո ղ ո յ, Կ ա թ յ լ ի չ ե ս կ ա յ ա փ ո ղ ո յ ի ա ն կ ի լ ը Ն 13.